ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 դեկտեմբերի երեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

175
(3206)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԻՆՉԵՎ ՏԱՐԵՎԵՐՋ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ ԿԿԱՅԱՑՎԻ՞

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ քննչական կոմիտեն ակտիվ քննչական գործողություններ է սկսել գործարար Սամվել Կարապետյանի դեմ հարուցված քրեական վարույթով:

Գործարարի փաստաբանները հայտնել էին, որ իրավապահների թիրախում են հայտնվել լեզվաբանները, որ փորձագիտական եզրակացություն են տվել գործարար Սամվել Կարապետյանի գործով: Ըստ պաշտպանական խմբի՝ նրանց Քննչական կոմիտե են կանչել, իսկ երեկ էլ խուզարկել են լեզվաբան Վանո Եղիազարյանի տունը: Փաստաբան Ռուբեն Հակոբյանը ամիսներ առաջ դիմել է մասնագետներին, որ փորձագիտական եզրակացություն տան՝ արդյոք եկեղեցու պաշտպանության մասին Սամվել Կարապետյանի խոսքերում իշխանությունը զավթելու կոչ կա: Մասնագետները եզրակացրել են, որ չկա:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն, բացի փորձագետներից, նախաքննական մարմինը ակտիվ քննչական գործողություններ է իրականացնում վկաների մասով. չի բացառվում, որ նման ակտիվ քննչական գործողությունները կապված լինեն այն հանգամանքի հետ, որ մինչեւ տարեվերջ նախաքննական մարմինը Սամվել Կարապետյանի դեմ հարուցված քրեական վարույթով նախաքննության ավարտ հայտարարի եւ որոշի գործը ուղարկել դատարան:

Հիշեցնենք, որ Սամվել Կարապետյանը վարչապետ Փաշինյանի ու իրավապահների թիրախում հայտնվեց հունիսի 17-ին՝ Հայ Առաքելական եկեղեցուն պաշտպանելու մասին իր հայտարարությունից ժամեր հետո: Ոստիկանները նրան ձերբակալեցին, այդ ընթացքում մտածեցին՝ նրա վերաբերյալ ինչ գործ կարելի է «սարքել», հետո SMS հրահանգով երկու ամսով կալանավորեցին ու մինչ օրս բարերարը գտնվում է կալանքի տակ:



«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Գուրգեն Արսենյանը դիմել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ վիճարկելով ՀՀ ՆԳՆ ոստիկանության գործողությունները, որոնք վերաբերում են իրեն պատկանող օրինական զենքերի պահպանման իրավունքի սահմանափակմանը: Դատարան ներկայացված հայցադիմումով դեսպանը պահանջում է պարտավորեցնել ՀՀ ՆԳՆ ոստիկանությանը ձեռնպահ մնալ իրեն պատկանող «WALTHER» (P-22, N G 002448, Գերմանիայի արտադրության), «BERETTA-92» մոդելի (9x19 մմ, A142740Z համարի) եւ «GLOCK 42» մոդելի (9x17 մմ, AFAB987 համարի) զենքերը վերցնելուց, առգրավելուց կամ վնասելուց (մալելուց): Ըստ «Ժողովուրդ»-ին հասած տեղեկությունների՝ ՆԳՆ ոստիկանությունը վերջին շրջանում փուլ առ փուլ ուսումնասիրում է քաղաքացիներին պատկանող զենքերի փաստաթղթերը եւ անգամ օրինական հիմքով ձեռք բերված զենքերի դեպքում պահանջում է դրանք հանձնել կամ ենթարկում է տեխնիկական վնասման՝ օգտագործման համար անպիտան դարձնելու նպատակով: Այս գործընթացը վերաբերում է ոչ միայն շարքային քաղաքացիներին, այլեւ պետական բարձր պաշտոն զբաղեցրած անձանց: Գուրգեն Արսենյանի պարագայում խոսքը վերաբերում է տարիներ շարունակ օրինական հիմքով ձեռք բերված եւ որպես հուշանվեր պահպանվող զենքերին, որոնք դեսպանը ցանկանում է պահել իրենց սկզբնական, արտադրական վիճակում՝ առանց տեխնիկական միջամտության: Հենց այս հանգամանքն էլ դարձել է իրավական վեճի առանցքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ին հեռացնելու՝ Նիկոլ Փաշինյանի պահանջին է միացել նաեւ Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը: Այս մասին արցախահայությունն իմացել է միայն նոյեմբերի 27-ին, երբ հրապարակվել էր տեսանյութ, որտեղ Վեհափառի դեմ դուրս եկած բարձրաստիճան հոգեւորականները՝ եպիսկոպոսներ ու արքեպիսկոպոսներ, հանդիպում-քննարկում են ունեցել Նիկոլ Փաշինյանի հետ: Այդ հանդիպում-քննարկմանը ներկա է գտնվել Վրթանես սրբազանը: Արցախի թեմի առաջնորդի կեցվածքն առաջացրել է ոչ միայն արցախահայության դժգոհությունը, այլեւ, ինչպես մեր աղբյուրներն են հայտնում, խռովություն է առաջացրել անգամ սեփական տան պատերի ներսում՝ հարազատների միջեւ: Այս դեպքից հետո, ինչպես մեր աղբյուրներն են հայտնում, սրբազանի քույրերը խզել են իրենց կապերը հարազատ եղբոր հետ: Նշենք, որ Վրթանես Սրբազանի քույրերից մեկի որդին էլ զոհվել է 44-օրյա պատերազմի ժամանակ: Արցախի թեմի առաջնորդի այս կեցվածքը մեծ ցասում ու զայրույթ է առաջացրել արցախահայության շրջանում: Նրանք նշում են, որ Թեմի առաջնորդը շրջափակման ժամանակ իրենց կողքին՝ Արցախում չի եղել, բայց ժողովուրդն աչք էր փակել այդ ամենի վրա՝ հարգելով այն փաստը, որ Վրթանես սրբազանն իրենց հոգեւոր առաջնորդն է, սակայն այս հանդիպումից հետո այլեւս աչք փակել չեն կարող:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ArmLur.am-ը հայտնել էր, որ հայրենի իշխանությունները կաթողիկոսին հեռացնելու համար նոր էլեկտրոնային էջ են ստեղծել: Barenorogum.am կայքով առաջարկում են էլեկտրոնային քվեարկությամբ հավանության տալ Կաթողիկոսի հեռացման եւ եկեղեցու բարենորոգման խնդրին: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ կայքի պատասխանատուն Ալմաստ Մուրադյանն է, որը ղեկավարն է Արարատյան Հայրապետական թեմի աշխատակազմի: Մուրադյանը նաեւ «Դիալոգ» հասարակական կազմակերպության նախագահն է: ՀԿ-ն կրոնի եւ հանրային կապերի ուսումնավերլուծական կենտրոն է: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդ կայքում գրվածը ուղիղ համեմատական է Նիկոլ Փաշինյանի հայտարարություններին: Կայքէջում հերթով հրապարակված են նաեւ եպիսկոպոսների հայտարարությունները:

Շարունակությունը եւ մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԼԻՑ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՏ

«2023Թ. ՑԱՆԿԱՑԵԼ ԵՄ ԹՈՂՆԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

«Ժողովուրդ» օրաթերթը «Ժողովուրդի հարցերը» հաղորդման ընթացքում բլից հարցեր է հղել «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աննա Գրիգորյանին:

-Տիկին Գրիգորյան, եթե մեկ նախադասությամբ նկարագրեք Ձեր անձնական նպատակը քաղաքականության մեջ, ինչպե՞ս կձեւակերպեք:

-Մարդկանց կյանքը դարձնել ավելի լավ, ապահով եւ բարեկեցիկ:

-Մի բան, որը շատերը չգիտեն Ձեր մասին: Փորձենք չակերտներ բացել:

-Չգիտեմ ինչ պատասխանել… Ես այն եմ, ինչ տեսնում եք հիմա: Ինչ կերպով մարդիկ ինձ լսում կամ տեսնում են հրապարակայնորեն, հենց այդպիսին եմ ես:

-Ո՞րն է այն կարմիր գիծը, որը երբեք չեք անցնի քաղաքական պայքարում:

-Կարծում եմ՝ անձնական կյանք ներխուժելը: Այն, ինչ իշխանությունն այսօր անում է՝ մարդկանց անձնական կյանքում ուղղակի միջամտություն ունենում:

-Ո՞ր հարցում եք Ձեզ միայնակ զգում խորհրդարանում: Եկեք անկեղծ լինենք:

-Ինձ միայնակ չեմ զգում, բայց նույնիսկ եթե միայնակ լինեի, նույնպես նորմալ կընդունեի: Մարդը ելույթ է ունենում իր քաղաքական համոզմունքների հիման վրա, ոչ թե նրա համար, որ իր հետեւում տասը մարդ կանգնի ու գովի: Եթե որոշում եմ, որ ինչ-որ բան պետք է ասեմ, ապա անպայման ասում եմ:

-Ընդդիմադիր լինելը ավելի շատ առավելությո՞ւն է, թե՞ ճնշում:

-Չեմ տեսնում այստեղ որեւէ առավելություն: Հատկապես այսօր ընդդիմադիր լինելը ոչ մի առավելություն չի տալիս: Դրան գումարվում է, որ ընդդիմադիրները եւ նրանց ընտանիքի անդամները մշտապես ճնշումների ներքո են ու կարծես մշտապես մանրադիտակի տակ:

-Եթե հնարավորություն ունենայիք ընդդիմության աշխատանքում փոխել մեկ բան, ո՞րը կլիներ:

-Ավելի համակարգված, հաստատուն եւ համարձակ աշխատանք: Երբեմն տպավորություն է, թե իշխանությունն է աշխատում ընդդիմության ֆորմուլայով, իսկ ընդդիմությունը՝ իշխանության:

-Երեք խորհուրդ աղջիկներին ու կանանց, որոնք ցանկանում են ներգրավվել քաղաքականության մեջ:

-Լինել համարձակ, ոչ մի թիրախավորումից չնահանջել: Հնարավորինս շատ շփվել մարդկանց հետ ու կապեր հաստատել, որովհետեւ քաղաքականության մեջ այդ կապերը մշտապես օգնում են:

-Ձեր ամենաուժեղ կողմը՝ երեք բառով:

-Ուժեղ՝ չգիտեմ, բայց ինձ բնութագրող երեք բառ կարող եմ ասել. ես խոնարհ մարդ եմ, արդարամիտ եւ խիզախ:

-Ո՞վ է Ձեր համար քաղաքականության մեջ չափանիշային կերպար:

-Գոլդա Մեիրը:

-Եղե՞լ է պահ, երբ ցանկացել եք դուրս գալ քաղաքականությունից: Ե՞րբ եւ ինչո՞ւ:

-Այո՛, եղել է նման պահ: Արցախի ամբողջական կորստից հետո՝ 2023 թվականին: Քանի որ 2020-ին քաղաքականություն մտնելու իմ հիմնական շարժառիթը Արցախն էր՝ գոնե պահպանել այն, ինչ մնացել էր: Մինչ այդ տարբեր փողոցային պայքարներ ենք արել, խորհրդարանում եղել են լարված իրավիճակներ: Եվ Արցախի կորստից հետո որոշ ժամանակ կարծում էի, թե իմ քաղաքական մասնակցությունն այլեւս իմաստ չունի: Բայց կարողացա հաղթահարել այդ փուլը՝ հասկանալով, որ դեռ կան վտանգներ, որոնց դեմ պետք է պայքարել:

-Ձեր կյանքի երեք սկզբունքները, որոնց երբեք չեք դավաճանի:

-Միշտ մնալ հավատարիմ ինքս ինձ ու իմ սկզբունքներին, օգնել մարդկանց՝ անկախ նրանից ով են, եւ լինել հնարավորինս արդարամիտ:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՕՆԼԱՅՆ ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԵՄ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ հայրենի իշխանությունները կաթողիկոսին հեռացնելու համար նոր էլեկտրոնային էջ են ստեղծել: Barenorogum.am կայքով առաջարկում են էլեկտրոնային քվեարկությամբ հավանության տալ Կաթողիկոսի հեռացման եւ եկեղեցու բարենորոգման խնդրին:

Կայքում նշված է. «Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ին հանգստի կոչելու, կաթողիկոսական տեղապահ ընտրելու եւ նոր կաթողիկոսական ընտրություններ կազմակերպելու պահանջ:

Միանում եմ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ին հանգստի կոչելու, կաթողիկոսական տեղապահ ընտրելու եւ նոր կաթողիկոսական ընտրություններ կազմակերպելու պահանջին»:

Արդեն մի քանի օր գործարկված այդ կայքին ու ներկայացված պահանջին միացել է 382 անձ:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Նիկոլ Փաշինյանն ավելի է կոշտացնելու ռեպրեսիաները Կաթողիկոսի դեմ: Նա ամեն տեղ, փակ զրույցներում պնդում է, որ ելք չկա, կաթողիկոսը պետք է հրաժարական ներկայացնի, հեռանա:

Վեհափառն էլ, սակայն, իր շրջապատին վստահեցրել է, որ հրաժարական չի տալու: Այս պատճառով էլ ստեղծվել է օնլայն ստորագրահավաքն ընդդեմ կաթողիկոսի, որ Փաշինյանը ներկայացնի այն իբրեւ հանրային պահանջ, որի կատարումն անխուսափելի է:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը երեկ ընդունել է ՀՀ-ում Ուկրաինայի դեսպանության գործերի հավատարմատար Վալերի Լոբաչին: Հանդիպմանը մասնակցել է նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

Ժաննա Անդրեասյանը կարեւորել է Հայաստանի եւ Ուկրաինայի միջեւ ձեւավորված գործընկերային հարաբերությունները՝ կարեւորելով կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում երկկողմ համագործակցության զարգացումը:

Հանդիպման ընթացքում կողմերը մտքեր են փոխանակել կրթության եւ գիտության ոլորտներում համագործակցության իրավապայմանագրային հարցերի վերաբերյալ՝ անդրադառնալով բարձրագույն կրթության, գիտության եւ տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության համաձայնագրերի ստորագրմանը:

ՀՀ-ում Ուկրաինայի դեսպանության գործերի հավատարմատար Վալերի Լոբաչը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար՝ կարեւորելով Հայաստանի հետ համագործակցության խորացման անհրաժեշտությունը: Նա բարձր է գնահատել ԿԳՄՍ նախարարության կողմից կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում իրականացվող բարեփոխումները եւ պատրաստակամություն հայտնել ընդլայնելու համագործակցությունը նշված ուղղություններով: Քննարկվել են նաեւ Ուկրաինայում գործող հայկական դպրոցների գործունեությանն առնչվող հարցեր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՆՈՐ ՆԻՍՏԸ ԹԵԺ Է ԼԻՆԵԼՈՒ

ArmLur.am-ի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ այսօր տարբեր ՔՊ-ականներ պետք է ներկայանան ՔՊ վարչության նիստին:

Բանն այն է, որ վարչության նիստում «քասթինգ» է հայտարարված, ու 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների նախընտրական ցուցակում առաջադրված թեկնածուները պետք է վարչությանը ներկայացնեն, թե ինչու են ցանկանում պատգամավոր դառնալ:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ վարչության նիստերի ժամանակ 20 անդամները տարբեր հարցեր են տալիս ՔՊ ցուցակի թեկնածուներին, «հարցաքննում» նրանց: Գլխավոր հարցադրողը, իհարկե, Նիկոլ Փաշինյանն է:

Հիշեցնենք, որ նախընտրական ցուցակում առաջադրվել են 383 թեկնածուներ, որոնցից պետք է մոտ 200-ը ընտրվեն ՔՊ նախընտրական հիմնական ցուցակում ընդգրկվելու համար:

ՔՊ-ում հատկապես կանանց շրջանում թեժ մրցակցություն է, թե ով պետք է լինի ՔՊ-ի ցուցակի անցողիկ տեղերում:

ԱՐՏԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ՝ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ԸՆԴԱՌԱՋ

2026 թվականի համապետական ընտրություններին ընդառաջ բավականին ակտիվ է գործում արտախորհրդարանական ընդդիմադիր դաշտը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ պարբերաբար փակ հանդիպումներ են ունենում հետեւյալ քաղաքական ուժերը՝ «Հայ ազգային կոնգրես» (ՀԱԿ), «Սասնա ծռեր», «Ապրելու երկիր», նոր ձեւավորված, իրավապաշտպան Նինա Կարապետյանցի «Նժար» շարժում, իրավապաշտպան Վիկտոր Մնացականյան եւ այլ քաղաքական ուժեր ու դեմքեր:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում մեր տեղեկությունները հաստատեց Վիկտոր Մնացականյանը:

«Այո, ձեր կողմից նշված ուժերի հետ մենք հանդիպումներ ունենում ենք: Իհարկե, այդ հանդիպումներից այս պահին մանրամասներ հայտնել չեմ կարող»,- ասաց Մնացականյանը:

Հարցին՝ ի՞նչ հարցերի շուրջ են համաձայնության եկել, ունե՞ն միասնական թեկնածու, թե ոչ՝ Մնացականյանը նշեց, որ առայժմ ժամանակը չէ խոսելու այս հարցերի վերաբերյալ:

Վիկտոր Մնացականյանը ո՛չ հերքեց, ո՛չ հաստատեց մեր այն տեղեկությունը, որ այս ուժերը նաեւ հանդիպում են ունենում նոր ձեւավորված «Միասնության թեւեր» շարժման առաջնորդ Արման Թաթոյանի հետ: Ի պատասխան մեր այդ հարցին՝նա, եզրափակելով զրույցը, նշեց, որ համարյա թե բոլոր ընդդիմադիր կուսակցությունների հետ հանդիպում-քննարկումներ ունենում են:

Նշենք, որ համապետական ընտրություններին ակտիվ են գործում նաեւ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից առաջնորդվող «Հայաստան» դաշինքը եւ բարերար, գործարար Սամվել Կարապետյանի կողմից նոր ձեւավորված «Մեր ձեւով» շարժումը:

Ինչ պատկեր ենք ունենալու 2026 թվականին՝ առայժմ, իհարկե, վաղ է ասել, բայց նախորդող իրադարձությունները մեզ հուշում են, որ ամեն ինչ այնքան էլ հանգիստ ու հանդարտ ընթացք չի ունենալու:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԵՀԱՓԱՌԻ ԱՆՈՒՆԸ ԿՐԿԻՆ ՋԵՂՉՎԵՑ

Մեծամոր խոշորացված համայնքի Այգեշատ բնակավայրի Սուրբ Գեւորգ եկեղեցում դեկտեմբերի 14-ին Նիկոլ Փաշինյանը կրկին մասնակցեց կիրակնօրյա պատարագի:

Սուրբ Գեւորգ եկեղեցում հոգեւոր ծառայության է կարգված Տեր Մաշտոց քահանա Ստեփանյանը, որը մինչ կիրակնօրյա պատարագն էր ArmLur.am-ին հայտնել, որ ինքն է մատուցելու այն՝ ինչպես կարգն է, ինչպես միշտ է արել, եւ անգամ զարմացավ մեր այն հարցից՝ հնչեցնելո՞ւ է Վեհափառի անունը, թե՞ ոչ:

Սակայն արդեն կիրակի օրը եւ Տեր Մաշտոցը, եւ Տեր Մկրտիչ քահանա Մուշաղյանը պատարագից ընդամենը րոպեներ առաջ վարանում էին պատասխանել լրագրողների այն հարցին, թե իրենցից ի վերջո ով է մատուցելու պատարագը:

Բարձրաստիճան հոգեւորականներ Տեր Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյանի եւ Տեր Սիոն արքեպիսկոպոս Ադամյանի առաջնորդությամբ կիրակնօրյա պատարագը մատուցեց Տեր Մաշտոցը: Նա էլ որոշեց զեղչել Վեհափառի անունը:

Նշենք, որ այս անգամ Նիկոլ Փաշինյանի հետ պատարագի էին մասնակցում Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը, Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանը, պատգամավորներ Ալխաս Ղազարյանը եւ Արմեն Խաչատրյանը:

Նիկոլ Փաշինյանին մշտապես պատարագների ուղեկցող Գեւորգ Պապոյանը, Ալեն Սիմոնյանը, Վահագն Ալեքսանյանը եւ Անահիտ Ավանեսյանն այս անգամ բացակայում էին:

Թե հաջորդ կիրակի որ եկեղեցում է Նիկոլ Փաշինյանը մասնակցելու պատարագի, առայժմ հայտնի չէ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ՀԵՏ

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը դեկտեմբերի 13-ին Գավառի մշակույթի կենտրոնում հանդիպել է Ղարաբաղից տեղահանված անձանց հետ, որոնք բնակություն են հաստատել Գավառում ու հարակից բնակավայրերում:

Հանդիպմանը մասնակցել են նաեւ Կառավարության շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչները:

Հնչել են հիմնականում սոցիալական աջակցությանը, զբաղվածության եւ բնակարանային ապահովման ծրագրերի հնարավորություններին, քաղաքացիության ստացման կարգին, պահանջվող փաստաթղթերին, կրթության ապահովմանը վերաբերող հարցեր:

Կառավարության ներկայացուցիչները պատասխանել են հանդիպման մասնակիցներին հետաքրքրող մի շարք հարցերի, տվել անհրաժեշտ պարզաբանումներ:

Բարձրացված խնդիրներն անհատապես հասցեագրվել են, առաջարկվել Կառավարության կողմից իրականացվող առավել համապատասխան ծրագրերը: Նմանատիպ հանդիպումները կրում են շարունակական բնույթ:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՓՈԽՄԱՐԶՊԵՏԸ 10 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՈՒՆԻ

Փոխմարզպետ Հայկ Հարությունյանը պետական համակարգի հնաբնակներից է. նա աշխատել է ե՛ւ նախկին ե՛ւ ներկայիս իշխանությունների հետ՝ ֆիզիկայի եւ մաթեմատիկայի ուսուցչից հասնելով Սյունիքի փոխմարզպետի պաշտոնին:

Հայկ Հարությունյանը հայտարարագրել է 10 անշարժ գույք, որից 3-ը բնակարան բազմաբնակարան շենքում՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ փոխմարզպետն ունի 4 հողամաս, 1 բազմամյա տնկի, բացի դրանից եւս 2 անշարժ գույքերի մասին տեղեկություն պաշտպանված է:

Նշված 2 բնակարանը Հարությունյանը նվիրատվության միջոցով նախորդ տարի օտարել է՝ 1-ը հանձնելով Խորեն Սաշայի Հարությունյանին, մյուսը՝ Աննա Սահակյանին:

2010-2014 թթ. Հարությունյանը աշխատել է որպես Եղվարդի միջնակարգ դպրոցի տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ:

2014-2022 թվականներին եղել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության կրթության բաժնի պետ:

Իսկ հիմա, արդեն փոխմարզպետ Հարությունյանը, 2020 թվականին ձեռք է բերել 2008 թվականի արտադրության Mazda մակնիշի մեքենա:

Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 72 հազար դրամ եւ 3 հազար 96 դրամ:

Կանխիկ դրամական միջոցները կազմել են 1,2 մլն դրամ՝ տարեսկզբի համեմատ նվազելով գրեթե 200 հազար դրամով:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 10 մլն 893 հազար դրամ, որն աշխատանքի վարձատրություն է Սյունիքի մարզպետի աշխատակազմից:

Հարությունյանի ստացած վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 3 մլն 528 հազար դրամ:

Փոխմարզպետը վարկերի մարմանն ուղղել է 7 մլն դրամ:

Նա հանդիսանում է նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տարածքային կառույցի խորհրդի անդամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՒ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՆՎԵՐՆԵՐԸ

Օրերս Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանը հայտնեց, որ ամենաշատ նվերները պաշտոնական այցերի ժամանակ ստանում են վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու արտգործնախարար Արարատ Միրզոյանը:

ArmLur.am-ը ԿԿՀ նվերների ռեեստրից տեղեկանում է, որ դեկտեմբերին նշված պաշտոնյաները դեռ նվերներ չեն ստացել:

Նոյեմբեր ամսին Արարատ Միրզոյանը ստացել է 2 նվեր, իսկ Նիկոլ Փաշինյանը՝ 7:

Հոկտեմբերին Փաշինյանը ստացել է 4 նվեր, Միրզոյանը՝ 1:

Օգոստոսին Փաշինյանը ստացել է 6 նվեր, Միրզոյանը՝ 1:

Հուլիս ամսին Փաշինյանը ստացել է 6 նվեր, Միրզոյանը՝ 1:

Հունիս ամսին նշված պաշտոնյաները նվերներ չեն ստացել:

Մայիս ամսին Փաշինյանը ստացել է 7 նվեր, Միրզոյանը՝ 9:

Ապրիլ ամսին նշված պաշտոնյաները նվերներ չեն ստացել:

Հունվար, փետրվար եւ մարտ ամիսներին նշված պաշտոնյաները նվերներ չեն ստացել:

Հարկ է նշել, որ նվերների ռեեստրում հայտարարագրվում են նաեւ պետական պարգեւները, որոնք մեծամասամբ ստանում են իրավապահ ոլորտի ներկայացուցիչները:

«Nan» ԿԱԹՆԱԽԱՌՆՈՒՐԴԸ ԿՀԱՎԱՔՎԻ ԴԵՂԱՏՆԵՐԻՑ

Nestle ֆիրմայի Nan կաթնախառնուրդի որոշ խմբաքանակներ Եվրոպական երկրների վաճառքի կետերից հետ են կանչվել: Այս մասին ArmLur.am-ը տեղեկանում է համացանցում իրականացված մի շարք հրապարակումներից: Նշվում է, որ պատճառը Cronobacter spp. բակտերիաներով հնարավոր վարակված լինելու կասկածն է:

Հրապարակումներում, մասնավորապես, նշվում է, որ Կոնտամինացված արտադրանքի օգտագործման ժամկետը մինչեւ 2027 թվականի հունիսն է: Խոսքը վերաբերում է «NAN EXPERT PRO sans lactose» կաթնախառնուրդին:

Տուփի ներքեւի մասում գտնվող խմբաքանակի համարն է L-51520346AC:

Նշվում է, որ այս արտադրանքը վաճառվել է 400 գրամանոց տուփերով 2025 թվականի հունիսի 13-ից մինչեւ նոյեմբերի 13-ը:

«Ծնողներին խորհուրդ է տրվում դադարեցնել այս տուփերի օգտագործումը եւ անմիջապես դեն նետել դրանք:

Սիրելի՛ ծնողներ, եթե դուք նույնպես ձեր բալիկների համար ձեռք եք բերել այդ խմբաքանակի տուփերից, դեն նետեք դրանք:

Տեղեկացնեմ, որ Cronobacter spp. (enterobacteries sakazaki) հազվադեպ, սակայն ծայրահեղ վտանգավոր բացիլ է, ինչը նորածինների մոտ կարող է հանգեցնել սեպսիսի, մենինգիտի (որը կարող է մահացու լինել) եւ նեկրոտիզացնող էնտերոկոլիտի:

Սիրելի՛ ծնողներ, ձեր նորածինների ամենաապահով սնունդը մայրական կաթն է, պայքարեք դրա համար»,- գրել է ֆեյսբուքյան օգտատեր, բժիշկ Հասմիկ Լալայանը:

ArmLur.am-ին ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից հայտնեցին, որ խնդրի մասին դեռ անցած շաբաթվանից տեղյակ են, վերահսկողական միջոցառումներ են իրականացվում, արդյունքերը կհրապարակեն:

«Այս պահին ստուգվում է՝ արդյոք այդ խմբաքանակները մեր երկիր մտել են, եթե այո, տնտեսվարողին հավաքելու հանձնարարական կտրվի», - նշեց ՍԱՏՄ մամուլի քարտուղար Անուշ Հարությունյանը:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՇԱՌՔ

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Արմեն Օհանյանը ՀՀ վարչական դատարանում քննվող թիվ ՎԴ/7943/05/23 եւ թիվ ՎԴ/7605/05/23 գործերով հանդիսացել է հայցվորներ Աշոտ Խաչատրյանի եւ Արամ Մելիքսեթյանի ներկայացուցիչը:

Տեղեկանալով, որ վերջիններս նշված գործերով իրենց օգտին դատական ակտ կայացնելու համար պատրաստ են կաշառք տալ դատական իշխանության ներկայացուցիչներին, նշված հարցը քննարկել է իրեն ծանոթ, դատական իշխանության ներկայացուցիչներ հանդիսացող պաշտոնատար անձանց հետ, ովքեր իրենց իշխանական լիազորությունները, ինչպես նաեւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ հայցվորների օգտին ապօրինի գործողություն կատարելու, այն է՝ ՀՀ վարչական դատարանում քննվող թիվ ՎԴ/7943/05/23 եւ թիվ ՎԴ/7605/05/23 գործերով Աշոտ Խաչատրյանի եւ Արամ Մելիքսեթյանի օգտին բարենպաստ դատական ակտ կայացնելու նպատակով պահանջել են 40.000 ԱՄՆ դոլար կաշառք:

Աշոտ Խաչատրյանն Արամ Մելիքսեթյանի հետ նախնական համաձայնությամբ, խմբով, պաշտոնատար անձանց՝ դատական իշխանության ներկայացուցիչների կողմից իրենց իշխանական լիազորությունները, ինչպես նաեւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով իրենց օգտին ապօրինի գործողություն կատարելու, այն է՝ ՀՀ վարչական դատարանում քննվող թիվ ՎԴ/7943/05/23 եւ թիվ ՎԴ/7605/05/23 գործերով հայցերն իրենց օգտին բավարարելու նպատակով, վերը նշված պաշտոնատար անձանց օժանդակող, նշված վարչական գործերին որպես ներկայացուցիչ ներգրավված ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Արմեն Օհանյանի միջոցով, 2023 թվականի հոկտեմբերից մինչեւ 2024 թվականի օգոստոսն ընկած ժամանակահատվածում, դեռեւս չպարզված հանգամանքներում տվել են 13.943.520 ՀՀ դրամին համարժեք 36.000 ԱՄՆ դոլար կաշառք:

Արդյունքում, ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/7943/05/23 գործով 2024 թվականի ապրիլի 23-ի վճռով բավարարել է Արամ Մելիքսեթյանի, իսկ թիվ ՎԴ/7605/05/23 գործով 2024 թվականի հունիսի 25-ի վճռով՝ Աշոտ Խաչատրյանի հայցերը՝ Երեւանի քաղաքապետարանին պարտավորեցնելով Աշոտ Խաչատրյանին եւ Արամ Մելիքսեթյանին տրամադրել ՀՀ կառավարության 29.07.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ նախատեսված բարենպաստ վարչական ակտեր՝ Երեւան, Դավթաշեն, Երեւան-Աշտարակ ճանապարհի հարեւանությամբ՝ համայնքապատկան հողամասում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու վերաբերյալ որոշումներ:

Արամ Մելիքսեթյանն Աշոտ Խաչատրյանի հետ նախնական համաձայնությամբ, խմբով, պաշտոնատար անձանց՝ դատական իշխանության ներկայացուցիչների կողմից իրենց իշխանական լիազորությունները, ինչպես նաեւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով իրենց օգտին ապօրինի գործողություն կատարելու, այն է՝ ՀՀ վարչական դատարանում քննվող թիվ ՎԴ/7943/05/23 եւ թիվ ՎԴ/7605/05/23 գործերով հայցերն իրենց օգտին բավարարելու նպատակով, վերը նշված պաշտոնատար անձանց օժանդակող, նշված վարչական գործերին որպես ներկայացուցիչ ներգրավված ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Արմեն Օհանյանի միջոցով 2023 թվականի հոկտեմբերից մինչեւ 2024 թվականի օգոստոսն ընկած ժամանակահատվածում, դեռեւս չպարզված հանգամանքներում տվել են 13.943.520 ՀՀ դրամին համարժեք՝ 36.000 ԱՄՆ դոլար կաշառք:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԱՎՏՈՎԹԱՐ

Դեկտեմբերի 15-ին ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ժամը 08:30-ի սահմաններում Երեւանի բնակիչ 24-ամյա Գագիկ Ս.-ն իր վարած «Mazda» մակնիշի ավտոմեքենայով Երեւան-Սեւան-Իջեւան ավտոճանապարհի 72 կմ հատվածում դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել մի քանի եղեւնիների եւ հայտնվել դաշտում:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիիկ Շամշյանը, վթարի հետեւանքով վարորդը տեղում մահացել է:

ՄԱՀՎԱՆ ԵԼՔՈՎ ՎՐԱԵՐԹ

Դեկտեմբերի 14-ին մահվան ելքով վրաերթ է տեղի ունեցել Լոռու մարզում: Ժամը 18:20-ի սահմաններում Վանաձոր քաղաքի Դեմիրճյան փողոցում Լոռու մարզի բնակիչ 22-ամյա Տիգրան Գ.-ն իր վարած «Mercedes» մակնիշի ավտոմեքենայով վրաերթի է ենթարկել ճանապարհը չթույլատրելի հատվածով հատող հետիոտն, Լոռու մարզի բնակիչ 73-ամյա Նեվրիկ Մ.-ին:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վարորդը փախուստի չի դիմել, ահազանգել է շտապօգնություն, եւ օպերատիվորեն ժամանած «Վանաձոր» բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը տեղում արձանագրել են հետիոտնի մահը:

ԱՎԱԶԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

Դեկտեմբերի 11-ին համայնքային ոստիկանության Գուգարքի բաժնում ավազակության վերաբերյալ օպերատիվ տեղեկություն էր ստացվել:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Դարպաս գյուղի 46-ամյա բնակիչը, որպես արհեստավոր գնալով 35-ամյա համագյուղացու տուն, էլեկտրաշոկով հարվածներ է հասցրել նրան, ապա պարանով կապել ձեռքերը՝ պահանջելով, որ նա հաշվեհամարին եղած գումարը փոխանցի իր հաշվին: Բռնության ենթարկված 35-ամյա երիտասարդը 10 000 դոլար փոխանցել է 46-ամյա համագյուղացու հաշվեհամարին:

Դարպաս գյուղի 35-ամյա բնակչից հաղորդում է ընդունվել:

46-ամյա տղամարդը ձերբակալվել, տեղափոխվել է Գուգարքի բաժին, ապա կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է Լոռու մարզի քննչական վարչություն:

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂԻ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Համայնքային ոստիկանության Աշտարակի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում դեկտեմբերի 13-ին Բյուրական գյուղում հայտնաբերել, ձերբակալել եւ բաժին են տեղափոխել 40-ամյա մի տղամարդու, որը դեկտեմբերի 12-ից հետախուզվում էր հոգեկան ներգործության, հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության մեղադրանքով: Խափանման միջոց է ընտրվել կալանքը: Նա տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

Դեկտեմբերի 12-ին Երեւանի ռեստորաններից մեկի մոտ Լեհաստանի քաղաքացիների մասնակցությամբ տեղի ունեցած վիճաբանության եւ ծեծկռտուքի դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում հանրային քրեական հետապնդում է հարուցվել 16 անձի նկատմամբ: Այս մասին լրատվամիջոցներին հայտնել են ՀՀ քննչական կոմիտեից:

ՔԿ-ից տեղեկացրին նաեւ, որ նրանցից 7-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է բացակայելու արգելքը, իսկ 9-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

«Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (խուլիգանությունը՝ մի խումբ անձանց կողմից) եւ 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (ֆիզիկական ներգործությունը՝ մի խումբ անձանց կողմից):

Կատարվում է նախաքննություն»,- հաստատեցին ՔԿ-ից:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՏԵՂԻ ՉՈՒՆԵՑԱՎ

Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանի եւ որդու՝ Սպարտակ Ղուկասյանի գործով դատական նիստը տեղի չունեցավ, քանի որ որ իրենց կողմի կանչված վկաները նիստին ներկա չէին: Այս մասին երեկ՝ դեկտեմբերի 15-ին, Հակակառուպցիոն դատարանի մոտ լրագրողներին ասաց Վարդան Ղուկասյանի պաշտպան Ջարուհի Փոստանջյանը:

Ըստ նրա՝ ամբողջ դատական համակարգը պետական բյուջեի գումարներով ժամավաճառությամբ են զբաղվում, նաեւ ոստիկանությունը, մեկուսարանները զբաղեցնելով՝ նման գործեր են կարում մարդկանց վրա ու բերում դատարաններ:

«Պարզվեց՝ վկաներից ոմանք ընդհանրապես չեն ծանուցվել, չգիտեմ՝ կան, չկան, ովքեր են, իսկ ոմանք էլ ծանուցվել են, բայց չեն եկել: Դատարանը որոշեց հարկադրանքի միջոց կիրառել այդ վկաներին բերման ենթարկելու վերաբերյալ», - նշեց փաստաբանը:

Հաջորդ նիստը նշանակվել է դեկտեմբերի 25-ին:

Վարդան Ղուկասյանը դատարանի դահլիճում, ի պատասխան լրագրողների հարցերի, ասաց, որ ընդդիմության հաջողությունը միասնության մեջ է:

Հարցին՝ ասում են հիբրիդային գործակալների դեմ են պայքարում, Ղուկասյանը պատասխանեց. «Ինչ ասես ասում են՝ հիբրիդային, երկնային, այլմոլորակային: Ամենակարեւորը՝ այլմոլորակայինների դեմ չպայքարեն, մնացածը լավ կլինի, մեկ էլ հանձնարարականով դատաիրավական ոլորտը չառաջնորդվի»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 11-ից 12-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 129 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՔԻՉ ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ՀԵԿՏԱՐՆԵՐԸ

Աշունն ավարտվեց, աշանանացանի համար լավագույն ժամանակահատվածը՝ նույնպես: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին մեր թղթակիցը տեղեկատվական նոր հարցում է ուղարկել՝Տավուշի մարզում ցանված աշնանացան ցորենի հեկտարների վերաբերյալ: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Համայնքապետարանների կողմից ներկայացված տեղեկատվությունների համաձայն՝ 2025թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ օպերատիվ տվյալներով մարզում կատարվել է 1749,0 հա աշնանացան, այդ թվում՝ Բերդ համայնքում -777,2 հա, Նոյեմբերյան համայնքում -671,6 հա, Իջեւան համայնքում - 300,2 հա: Աշնանացանի աշխատանքները շարունակվում են»: 2016 թվականին Տավուշի մարզում աշնանացան ցորենի ցանքերը կազմել են 5684 հեկտար: Անցած 9 տարում Տավուշում աշնանացանի հեկտարները մեծ չափով նվազել են: Իջեւան համայնքի սահմանամերձ Կիրանցում աշնանացան ցորեն ընդհանրապես չի ցանվել: Կիրանցի բնակիչները հայտնեցին, որ աշնանացանի համար մոտ 10 հեկտար վար է արվել, սակայն ցանվել է ընդամենը 1 հեկտար գարի: Այս տարի գործում է աշնանացան ցորենի մշակությանն աջակցության պետական ծրագիր, որով մշակվող ամեն հեկտար աշնանացանի դեպքում մշակողին տրվում է 80 հազար դրամ աջակցություն: Սակայն այդ օգնությունը հատկացվում է միայն պետական հավաստագիր ունեցող ցորեն ցանելու դեպքում: Կիրանցի բնակիչները սպասում էին պետական հավաստագրով ցորենին: Վերին Ծաղկավան համայնքի նախկին ղեկավար, այժմ Բերդի համայնքապետարանի մասնագետ Կամո Չոբանյանը տարիներ շարունակ զբաղվում է Ռուսաստանից որակյալ սերմացուի ներկրմամբ, հացահատիկի մշակությամբ: Նա ասաց, որ անցյալ շաբաթ ինքը 150 տոննա սերմացու ցորեն է տրամադրել Կիրանցի, Սարիգյուղի, Սեւքարի, Այգեհովտի, Աչաջրի, Վազաշենի ֆերմերներին: Որակյալ ցորենի սերմացուն վաճառվում է կիլոգրամը 250 դրամով, մեկ հեկտար ցանելու համար պահանջվում է 200 կիլոգրամ ցորեն: Կ. Չոբանյանը հայտնեց, որ այս տարի ինքը հայրենի Վերին Կարմիրաղբյուր գյուղում ցանել է 8 հեկտար ցորեն, իսկ ամբողջ գյուղում ցանվել է շուրջ 150 հեկտար աշնանացան ցորեն: Մեկ հեկտար վարի համար տրակտորիստին վճարում են 45 հազար, իսկ Բերդ համայնքում՝ 55 հազար դրամ: Պետության կողմից ցորենի մշակության համար տրվող օգնությունը՝մեկ հեկտարի հաշվով հատկացվող 80 հազար դրամը, չի բավարարում անգամ ցորենի սերմի ու աշնանացանի վարի համար վճարելուն: Մինչդեռ հողագործը պետք է վճարի նաեւ արտհնձի ու հնձված ցորենը դաշտից տեղափոխելու համար: Խնդիր է այն, որ Տավուշում ցանվող ցորենի դաշտերը չեն ոռոգվում, վերջին տարիներին ձմռանը ձյուն քիչ է տեղում, որի հետեւանքով ցորենը լավ չի աճում, բարձր բերք չի ստացվում: Բացի դրանից՝ ցորենի դաշտերը քիմիական եւ բնական պարարտանյութերով չեն պարարտացվում, մկնանման կրծողների դեմ քիմիական պայքար չի տարվում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿ

ԱՍՏՂԵՐԸ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ, ԲԱՅՑ ՉԵՆ ՊԱՐՏԱԴՐՈՒՄ

Չիու տարին՝ առանց դաշնակիցների. Երկվորյակ Փաշինյանի քաղաքական հորոսկոպը 2026-ին. ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան

Նապաստակի տարում ծնված Նիկոլ Փաշինյանի համար տարին հաջող ընթացք ունեցավ՝ չնայած տարբեր գլոբալ ծրագրերի ձախողումներին: Հաջողվեց ստանալ լուսանկար Թրամփի հետ, խաղաղության խոստումներ, եւ իրականացվեց անասնակերի ներկրում Հայաստան՝ Ադրբեջանով եւ Վրաստանով: Կաթողիկոսի հարցը շարունակում է մնալ մարտահրավեր, անլուծելի խնդիր՝ չնայած գործադրվող անպատկերացնելի ջանքերին: 2026-ը լարված տարի է լինելու: Մի կողմից հոգենորոգության, բարեվարքության խոստումներ ու քայլեր, մյուս կողմից «ասֆալտին փռելու» եւ «բորդյուրներ լիզել տալու» քարոզչական ախորժակ՝ ձայն հավաքելու համար: Չիու տարում երկվորյակների համար աստղերը հուշում են լինել առավել զսպված, սուտ խոսելիս՝գոնե չափավոր, որ հնարավոր լինի վարչական լծակների կիրառմամբ հասնել որոշակի արդյունքների, քանի որ դաշնակիցների հարցում լրջագույն խնդիրներ կան քաղաքական դաշտում: Պատրաստակամ դաշնակիցները չեն հաղթահարում անցողիկ շեմը ընտրություններում, հաղթահարողներն էլ՝ չեն համագործակցում:

2025-ը ամփոփելով՝ արձանագրվում է, որ միապետությունը դարձել է արդեն իրականություն. Դուք շարունակում եք լինել երկրում թիվ մեկ որոշում կայացնողը, դրանց կատարման վերահսկողը, իսկ նախարարը, դատավորը, դատախազը՝ մարդկանց բռնողն ու բաց թողնողը: Այս միապետության ձգտումները եթե շարունակվեն ապագայում, նախկիններին ապագան հեռու չի լինի ձեզնից՝ որքան էլ հիմա պնդում եք, թե որեւէ վտանգ չի սպառնում ձեր իշխանությանը: ՀՀԿ-ն էլ էր այդպես կարծում 2018-ի ապրիլին:

Վերջում՝ հիշեցնենք, որ աստղերը հուշում են, սակայն չեն պարտադրում:

2026-ին ընդառաջ՝ հումորային շարք, որը 15 տարի «Ժողովուրդ» օրաթերթը պահում է որպես անխախտ ավանդույթ:

Քաջ Նազարի երազանքը եւ կաղիկի տարվա դասերը Ալեն Սիմոնյանի համար. քաղաքական աստղագուշակ. ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյան

Կապիկի տարում ծնված Ալեն Սիմոնյանի համար կյանքի լավագույն տարիները ավարտվում են, եւ այդ միտքն արդեն հանգիստ չի տալիս: Սթրեսը, անքնությունն ու ապագայի նկատմամբ անորոշությունը շարունակում են ուղեկցել ձեզ ողջ տարվա ընթացքում: Դուք Ազգային ժողովը ոտքի տակ խալի դարձրած այն եզակի պաշտոնյան եք, որ կարողանում եք մինչեւ նշված վերջին ժամկետ պաշտոնավարել ԱԺ նախագահի պաշտոնում. նախկինում բոլոր ԱԺ նախագահները կեսից հեռացել են կամ սպանվել: Թիմի ներսում անհասկացվածությունն ու Ձեզ չսիրելու, չգնահատելու զգացողությունը կուղեկցի նաեւ 2026-ին, քանի որ տարվա առաջին կեսը պետք է կաշվից դուրս գալով ապացուցեք, որ հավատարիմ եք, որ արժանի եք, որ պետք է Ձեր տեղն ունենաք: Հասկանալի է, որ վարչության կազմ մի կերպ մտնելով՝ դեռ չեք ապահովագրել հաջորդ իշխանական վերադասավորումներում Ձեզ համար ցանկալի տեղը: Շարունակեք Ձեր ջանքերը՝ քավորին ու նրա շրջապատին հարստացնելու, որ միասին ծախսեք: Այծեղջյուրը ձիու տարվա այն եզակի երջանիկներից է, որ ընտանիքի մի մասը կառավարական ամառանոցում է վայելում կյանքը, մյուս մասը՝Ջրվեժի ամառանոցում, բայց ինքը ոչ մի ընտանիքի հոգսը չի հոգում. պետբյուջեն «նրանց թիկունքին» է: Աստղերը կապիկի տարում ծնվածներին հուշում են՝ ձիու տարում իջնեն օդերից դեպի իրականություն, խզեն կապերը քրեական-գողական աշխարհի հետ, դառնան առավել խոնարհ եւ հասկանան, որ ընդդիմադիրներին հայհոյելով, վիրավորելով՝ միեւնույնն է, իրենց քաղաքական կշիռը չի բարձրանում:

Դուք ՔՊ-ի ամենամերժելի կերպարներից մեկն եք, որին աստղերը պարտադրում են չթքել քաղաքացիների դեմքին, նույնիսկ չսպառնալ թքել. դա բարեկրթության կանոններին դեմ է: Թիկնազորը այսօր կա կողքիդ, վաղը չի լինելու: «Քաջ Նազարը» ստեղծագործությունը չմոռանաք, որ այդ ճանապարհով ՀՀ նախագահ դառնալու վաղեմի երազանքը ինչ որ մի օր իրականանա:

2026-ին ընդառաջ՝ հումորային շարք, որը 15 տարի «Ժողովուրդ» օրաթերթը պահում է որպես անխախտ ավանդույթ:

Հեղափոխական ցուցից մինչեւ կառավարական աթոռ. ի՞նչ են հուշում աստղերը. ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավար-նախարար Արայիկ Հարությունյան

Հեղափոխական ցուցը ձեռքին եկաք պաշտոնի. Եղաք նախարար, վարչապետի աշխատակազմի ղեկավար եւ ներկայանում եք իբրեւ բարեկրթության, բարեվարքության մարմնացում, բայց իրականում ամենաազդեցիկ պաշտոնյաներից եք, որ հախուռն բնավորություն ունեցող Նիկոլ Փաշինյանի մոտ կարողանում եք տեսակետ ձեւավորել, անգամ՝ փոխել: Տարին վայրիվերումներից դուրս էր՝ հատկապես ընտանեկան գործերը, բարեկեցությունը կարգավորելու առումով: Նախարարներին ճնշելով՝ Ձեր կամքը ժպիտով, կամ էսէմէս-մեյլով թելադրելով առաջ եք տանում նաեւ ՔՊ-ի գործերը՝ նստած կառավարական աթոռին: Մարդկանց աշխատանքից ազատում եք՝ կուսակցական, քաղաքական հայացքների համար, բայց ոչ անձամբ ու ոչ Ձեր ձեռքով՝ փափուկ ուժով:

Աստղերը հուշում են կույսերին բարիանալ, լինել առավել շրջահայաց, մտածել ընտանիք կազմելու մասին, քանի որ տարիները առաջ են գնում, իսկ թեկնածուները՝չնայած պաշտոնին, չեն կարողանա երկար սպասել: 2026-ը ոչխարի տարում ծնված աշխատակազմի ղեկավարին խոստանում է մեծ թռիչքներ, որը կարձանագրվի Փաշինյանի երկնակամարում՝ գործադիրի շուրջ:

2026-ին ընդառաջ՝ հումորային շարք, որը 15 տարի «Ժողովուրդ» օրաթերթը պահում է որպես անխախտ ավանդույթ:

Լիլիթ Մակունցի աստղային վերադարձը՝ նոր ինտրիգների աղբյուր. 2026-ի աստղագուշակ ՀՀ Վարչապետի գլխավոր խորհրդական Լիլիթ Մակունց

Անցնող տարին կայունությամբ աչքի չընկավ, քանի որ ԱՄՆ քաղաքական իրավիճակի մասին Ձեր հաշվարկներն ու կանխատեսումները չիրականացան, նոր վարչակարգի հետ աշխատանքը, բնականաբար, չէր ստացվելու, ստիպված եղաք տուն վերադառնալ: Դարձ՝ ուղիղ Արայիկ Հարությունյանի կողմից ղեկավարվող վարչապետի աշխատակազմ: 2026-ին սպասումները շատ են, իսկ մինչ ընտրությունները պետք է զինվել համբերությամբ, աչքի չընկնել ոչնչով, մինչեւ արդյունքները կպարտադրեն կա՛մ կոալիցիա կազմել, կա՛մ կառավարություն ձեւավորել: Իհարկե, Ձեր վերադարձը հատկապես ԱԺ ղեկավարության մոտ դրական իմպուլսներ չի առաջացրել, քանի որ դիտարկվում եք իբրեւ ԱԺ-ի ապագա խոսնակ, եթե ՔՊ-ն մեծամասնություն դառնա: Աստղերը հուշում են խոզի տարում ծնվածներին զրուցել եղբոր, բարեկամների հետ, ովքեր օգտվելով արտոնություններից՝ հանքեր ու այլ բիզնեսներ են աշխատեցնում՝ ՀՀԿ-ի մերժված բարքերով: Իհարկե, աստղերը չեն պարտադրում, բայց նրբորեն հիշեցնում են, որ գեղեցիկ կինը պետք է նաեւ գեղեցիկ ընտանիքի մայր լինի. 2026-ը զույգ տարի է. գուցե փորձեք վերջապես. կարիճների համար լավ կանխատեսումներ կան:

2026-ին ընդառաջ՝ հումորային շարք, որը 15 տարի «Ժողովուրդ» օրաթերթը պահում է որպես անխախտ ավանդույթ:

● Դեկտ. 11-ից 12-ի ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 24 պատահար, 1 մարդ մահացել է, 30-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»

ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ՝ AEB Mobile-ՈՎ

«Հայէկոնոմբանկը», ընդլայնելով թվային ծառայությունների շրջանակը, AEB Mobile հավելվածի եւ AEB Online համակարգի օգտատերերին առաջարկում է ձեռք բերել «Հայէկոնոմբանկի» թողարկած դրամային եւ դոլարային պարտատոմսեր:

Պարտատոմսերի տեղաբաշխման հիմնական պայմաններն են.

Դրամային պարտատոմսերի դեպքում.

տարեկան եկամտաբերություն՝ 10.50%,

մարման ժամկետ՝ 36 ամիս,

անվանական արժեք՝ 10,000 դրամ,

թողարկման ծավալ՝ 3.0 մլրդ դրամ,

առաջարկը գործում է ս.թ. սեպտեմբերի 30-ից մինչեւ 2026թ. փետրվարի 28-ը:

Դոլարային պարտատոմսերի դեպքում.

տարեկան եկամտաբերություն՝ 5.50%,

մարման ժամկետ՝ 36 ամիս,

անվանական արժեք՝ 100 ԱՄՆ դոլար,

թողարկման ծավալ՝ 5.0 մլն ԱՄՆ դոլար,

առաջարկը գործում է ս.թ. սեպտեմբերի 17-ից մինչեւ 2026թ. փետրվարի 17-ը:

Արժեկտրոնների վճարումն իրականացվում է կիսամյակային պարբերականությամբ:

Պարտատոմսեր կարող են ձեռք բերել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք:

««Հայէկոնոմբանկը» ձգտում է թվային լուծումների միջոցով ներդրումային հնարավորություններն ավելի մատչելի, թափանցիկ եւ հարմար դարձնել իր հաճախորդների համար: Պարտատոմսերում ներդրում կատարելու այս առցանց գործիքը նախատեսված է ինչպես փորձառու ներդրողների, այնպես էլ սկսնակների համար, ովքեր կայուն եկամտով եւ ցածր ռիսկայնությամբ ներդրումային տարբերակ են փնտրում: Ընդհանուր առմամբ, AEB Mobile-ով պարտատոմսեր ձեռքբերելու գործիքը թույլ կտա ապահովել ներդրումների հասանելիությունը եւ ընդլայնել թվային ֆինանսական ծառայությունների շրջանակը», - նշում է «Հայէկոնոմբանկի» Գործադիր տնօրենի ֆինանսական գծով տեղակալ Ռուբեն Բաղալյանը:

Հիշեցնենք, որ մինչեւ 2027թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնային եկամուտները ենթակա չեն հարկման: Պարտատոմսերով ներգրավված միջոցները երաշխավորվում են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

86 86 | aeb.am

«Հայէկոնոմբանկը» վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

«Այ Դի» ԲԱՆԿՆ ՈՒ «ԻԴՐԱՄԸ»՝ Big Christmas Market with Coca-Cola-ԻՆ

Idcoin-ՆԵՐ ԵՎ idplus ՆՎԵՐ-ՔԱՐՏԵՐ

Մոտենում են տարվա ամենասպասված օրերը, տոնական տրամադրությունն ամենուր է: Տարվա այս օրերն էլ ավելի հիշարժան է դարձնում Big Christmas Market with Coca-Cola 2025 ցուցահանդես-տոնավաճառը, որն այս տարի տեղի է ունենալու դեկտեմբերի 17-ից 21-ը «Մերիդիան» էքսպո կենտրոնում:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի եւս, տոնավաճառին բացառիկ առաջարկներով կներկայանան IDBank-ն ու «Իդրամը». ընկերությունների ներկայացուցիչները պատմելու են գործող հնարավորությունների մասին եւ պատասխանելու են այցելուների հնարավոր հարցերին: Մասնավորապես, տոնավաճառի օրերին գործելու են idplus-ի նվեր-քարտեր շահելու եւ idcoin-եր ստանալու առաջարկներ: Տոնավաճառի այցելուներն այս առաջարկներից օգտվելու հնարավորություն կստանան՝ Idram&IDBank հավելվածով կատարելով QR վճարումներ գործընկեր կազմակերպությունների տաղավարներից գնումներ կատարելիս:

Big Christmas Market with Coca-Cola 2025 ցուցահանդես-տոնավաճառի ընթացքում գործելու են հետեւյալ առաջարկները.

Կուտակեք idcoin-եր.

2025թ. դեկտեմբերի 17-ից դեկտեմբերի 21-ը կատարեք QR վճարումներ Big Christmas Market-ի վաճառակետերում Idram&IDBank-ով եւ ամեն վճարումից ստացեք մինչեւ 30% ակնթարթային idձoin՝ հանրագումարային առավելագույնը մինչեւ 10.000 idcoin: idcoin-երը կարող եք ծախսել նաեւ ցուցահանդեսից հետո ցանկացած վաճառակետում Idram&IDBank-ով QR վճարումներ կատարելիս:

idplus-ի նվեր-քարտ

Շահելու հնարավորություն.

- կատարեք միանվագ 10.000 ՀՀ դրամի եւ ավելի առնվազն 3 QR վճարում Idram&IDBank հավելվածով,

- կամ 5.000 ՀՀ դրամի եւ ավելի առնվազն 3 QR վճարում Rocket Line 0%-ով՝ ըստ սահմանված ժամկետների եւ պայմանների,

- վճարումները հաստատող էլեկտրոնային անդորրագրերով եկեք մեր տաղավար եւ ստացեք հնարավորություն շահելու 3.000-20.000 ՀՀ դրամին համարժեք idplus-ի նվեր-քարտ:

Առաջարկները կգործեն Big Christmas Market ցուցահանդես-տոնավաճառի շրջանակում՝ դեկտեմբերի 17-ից 21-ը ներառյալ: Առաջարկի շրջանակում idplus-ի նվեր-քարտ կարող եք ստանալ 1 անգամ:

Գովազդային վիճակախաղի բոլոր պայմաններին կարող եք ծանոթանալ կայքէջում:

Առաջարկի շրջանակում յուրաքանչյուր հաճախորդ կստանա մինչեւ 30% ակնթարթային idcoin, բայց ոչ մի պարագայում ոչ ավելի, քան հանրագումարային առավելագույնը 10,000 idcoin (հարկումից հետո): 1 idcoin = 1 ՀՀ դրամ:

idcoin-ը տրամադրվում է IDBank-ի կողմից եւ ենթակա է հարկման օրենքով սահմանված կարգով: Դուք այն ստանում եք արդեն հարկված:

Սպասում ենք Ձեզ «Մերիդիան» էքսպո կենտրոնում եւ մաղթում հաճելի գնումներ:

Ընկերությունները
վերահսկվում են ԿԿ ԿԲ կողմից

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՍՏԸ ՀԱՂԹԵԼ Է

Ընդդիմադիր պահպանողական քաղաքական գործիչ Խոսե Անտոնիո Կաստը հաղթել է Չիլիի նախագահի ընտրությունների երկրորդ փուլում: Այդ մասին են վկայում այն արդյունքները, որոնք հրապարակել է երկրի ընտրական ծառայությունն ընտրատեղամասերի 83,43%-ից ստացված ձայների հաշվարկից հետո:

Կաստի օգտին է քվեարկել ընտրողների 58,61%-ը: Նրա մրցակիցը՝ Ժանետ Խարան, որը ներկայացնում է կառավարող «Միասնություն Չիլիի համար» ձախակենտրոն կոալիցիան, ստացել է 41,39%: Նա արդեն ընդունել է պարտությունը եւ շնորհավորել Կաստին հաղթանակի առթիվ:

Կաստը հանդես է գալիս տնտեսության մեջ կառավարության միջամտության կրճատման եւ հանցավորության եւ անօրինական միգրացիայի դեմ պայքարի ավելի խիստ միջոցների օգտին: Նա խոստանում է իջեցնել կորպորացիաների շահույթի հարկերի դրույքաչափը, կրճատել պետական ծախսերը եւ արգելափակոցներ կառուցել Բոլիվիայի հետ սահմանին:

Կաստը կդառնա Չիլիի նախագահի պաշտոնում առաջին ծայրահեղ պահպանողական քաղաքական գործիչը՝ գեներալ Աուգուստո Պինոչետի զինվորական վարչակարգի ժամանակներից ի վեր:

ԿԱՄՈ ՑՈՒՑՈՒԼՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԲ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալ Կամո Ցուցուլյանն ընդունել է Համաշխարհային բանկի պատվիրակությանը: Այդ մասին հայտնում են ՆԳՆ-ից:

Հանդիպմանը ներկա էին Շրջակա միջավայրի նախարարության Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնի տնօրեն Լեւոն Ազիզյանը, Փրկարար ծառայության տնօրենի տեղակալներ Տիգրան Պետրոսյանն ու Արսեն Մկրտչյանը:

Նշելով, որ Համաշխարհային բանկի հետ երկարամյա համագործակցությունն էապես նպաստել է Փրկարար ծառայության կարողությունների զարգացմանը՝ Կամո Ցուցուլյանը կարեւորել է նոր նախաձեռնությունների հնարավորությամբ համագործակցության շարունակականությունը:

Պատվիրակության անդամներ՝ հիդրոօդերեւութաբանության գծով խորհրդատուներ Հալեհ Քուվայթը, Վլադիմիր Ցիրկունովը եւ քաղաքաշինության մասնագետ Նորա Միրզոյանը ներկայացնելով Համաշխարհային բանկի առանցքային ծրագրերը՝ ընդգծել են, որ դրանցում առանձնահատուկ կարեւորություն է տրվել հիդրոօդերեւութաբանության, կլիմայական եւ վաղ ազդարարման համակարգերի կատարելագործմանը:

Որպես վաղ ազդարարման եւ ռիսկերի կառավարման համակարգի առաջնահերթություն՝ քննարկվել են կարողությունների զարգացման, արդյունավետ կառավարման եւ միջգերատեսչական համագործակցության ամրապնդման հարցեր:

Անդրադառնալով հիդրոօդերեւութաբանության ոլորտի բարեփոխումների ճանապարհային քարտեզով նախատեսված գործողություններին՝ առանձնացվել են այն առաջնահերթությունները, որոնք ուղղված են կլիմայական ռիսկերի պայմաններում Փրկարար ծառայության եւ այլ գերատեսչությունների միջեւ վաղ ազդարարման, ինչպես նաեւ հանրային իրազեկման ապահովմանը: Ընդգծվել է, որ այդ գործողություններն առանցքային են ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու եւ բնական աղետներին դիմակայելու կարողություններն ամրապնդելու համատեքստում:

Կողմերը վերահաստատել են համագործակցությունը շարունակելու պատրաստակամությունը՝ ընդգծելով, որ ժամանակակից համակարգերի զարգացումը կնպաստի ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ միաժամանակ ապահովելով դիմակայուն առաջընթաց:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ

250 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԱՅՍ ՕՐԸ ԾՆՎԵՑ ՋԵՅՆ ՕՍԹԻՆԸ

Նրա ստեղծագործությունները ֆենադատում են 18-րդ դարի վերջի սենտիմենտալ վեպերը եւ 19-րդ դարում գրական իրադաբտության անցման մասն են կազմում: Մուր հեգնանքը, իրադաբտությունը, հումորը եւ սոցիալական խավերի նկարագրությունները օգնել են նրան համբավ ձեռք բերել ֆենադատների, գիտնականների եւ ժամանակակից ընթերցողի շրջանում:

1775 թվականի այս օրը՝ դեկտեմբերի 16-ին, ծնվեց անգլիացի վիպագիր, համաշխարհային ճանաչում ունեցող կին գրող Ջեյն Օսթինը: Նա ծնվել է Սթիվենթոն գյուղում՝ Համփշիր կոմսությունում: Հայրը՝Ջորջ Օսթինը, Սթիվենթոնի անգլիական ծխական դպրոցի ռեկտորն էր եւ սերում էր հարգված ու բարեկեցիկ փայտամշակների ընտանիքից:

Օսթինը դեռ 11 տարեկանից, իսկ գուցե ավելի շուտ, սկսեց պատմություններ ու բանաստեղծություններ գրել՝ նախ ընտանիքի զվարճության համար: Այդ վաղ գործունեության մեջ առօրյայի մանրամասներն հաճախ չափազանցված էին. ինչպես նշում է Ջանետ Թոդը, «պատմություններն ամբողջովին լցված են կանանց ուժի, նրանց ազատությունների, երբեմն էլ անարգել վարքագծի մասին պատկերացումներով»:

1787-1793 թվականներին գրված իր 29 վաղ ստեղծագործությունները Օսթինը հետագայում համախմբեց երեք տետրերում, որոնք այսօր հայտնի են «Ջուվենիլիա» անվամբ: Նրանք, կոչվելով «Առաջին հատոր», «Երկրորդ հատոր» եւ «Երրորդ հատոր», ներառում էին Օսթինի շուրջ 90 հազար բառանոց վաղ գրական ժառանգությունը: Գիտնական Ռիչարդ Ջենկինսը «Ջուվենիլիան» բնութագրում է որպես աշխույժ ու անսահման ազատ ոճի գործերի հավաքածու՝ այն համեմատելով 18-րդ դարի նշանավոր գրող Լորենս Ստեռնի ստեղծագործությունների հետ:

Այդ աշխատանքների շարքում է նաեւ 1790 թվականին գրված «Սեր եւ ընկերություն» երգիծական վեպը, որտեղ Օսթինը ծաղրում է հանրահայտ սենտիմենտալ վեպերի ոճը: Մեկ տարի անց նա ստեղծեց «Անգլիայի պատմությունը», որը քրոջ՝ Կասանդրայի պատրաստած ջրաներկ մանրանկարի պատկերապատմամբ ձեռագիր տարբերակ էր: Այս աշխատությունը նմանակում էր այն ժամանակ հանրաճանաչ պատմագրական գրքերը, հատկապես Օլիվեր Գոլդսմիթի «Անգլիայի պատմությունը»:

18 տարեկանում Օսթինը սկսեց գրել ավելի երկար եւ բարդ ու մտածված ստեղծագործություններ: 1796 թվականին նա սկսեց աշխատել իր երկրորդ վեպի՝ «Առաջին տպավորությունների» վրա, որը հետագայում վերանվանվեց «Հպարտություն եւ նախապաշարմունք»: Վեպի առաջին տարբերակը նա ավարտեց 1797 թվականի օգոստոսին՝ ընդամենը 21 տարեկանում: Այդ տարիներին Օսթինը իր նորաստեղծ վեպերը կարդում էր ընտանիքի անդամների համար՝ դեռեւս անավարտ վիճակում: Նրա հայրը առաջինն էր, որ փորձեց ապահովել վեպի տպագրությունը: Սակայն հայտնի է, որ հրատարակիչները այդ շրջանում մերժում էին բնագիրը. վեպն անուշադրության է մատնվել ավելի քանի 15 տարի:

Բայց, այնուամենայնիվ, ժամանակն իր գործն արեց. 1811 թվականին լույս տեսնող «Բանականություն եւ զգացմունք» վեպի հաջողությունից հետո Ջեյն Օսթինը վերջապես կարողացավ հրատարակել «Հպարտություն եւ նախապաշարմունք» վեպը, որն էլ դարձավ անգլիական գրականության գոհարներից մեկը:

«Հպարտություն եւ նախապաշարմունք» վեպի հիման վրա ստեղծվել են բազմաթիվ էկրանավորումներ՝

- սեւ-սպիտակ լիամետրաժ ֆիլմ (1940, ԱՄՆ),
- հեռուստասերիալ (1995),
- լիամետրաժ ֆիլմ (2005),

Վեպի հայերեն թարգմանությունը լույս է տեսել 2014 թվականին: Մինչ օրս այն համարվում է համաշխարհային գրականության ամենահայտնի ու ամենասիրված ստեղծագործություններից եւ շարունակում է մնալ լավագույն բեսթսելլերների շարքում:

Թեպետ Ջեյն Օսթինի հետմահու հրատարակված գործերը կազմեցին հինգ հատոր, նրա ստեղծագործություններից գեթ մեկը յուրաքանչյուր ընթերցող կարդում է իր կյանքի ընթացքում:

Օսթինը 18-19-րդ դարի անգլիական եւ համաշխարհային գրականության մեջ թողել է անջնջելի հետք՝ դառնալով իրապաշտ վեպի անկրկնելի վարպետ:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԻՆՉ ԱՐԺԵՐ ՇՔԵՂ ՀՐԱՎԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՌՎԵՑԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԱԾԱՌԻ ԼՈՒՅՍԵՐԸ

Դեկտեմբերի 14-ին գերբեղ հրավառություն տեղի ունեցավ Հանրապետության հրապարակում: Քաղաքապետ Տիգրան Ավինյանը հրապարակում անմիջական մասնակցություն էր ունենում լույսերի վառման արարողությանը, իսկ վարչապետը Կառավարության պատշգամբից հետեւում էր հանդիսավոր միջոցառմանը:

Հիշեցնենք՝ ArmLur.am-ը գրել էր, որ Երեւան քաղաքի տոնական ձեւավորման համար հատկացվել էր ընդհանուր 607 մլն 645 հազար ՀՀ դրամ:

Միջոցառումից հետո ՆԳՆ-ն հայտարարություն տարածեց, որ հրապարակում միջոցառման ընթացքում արտակարգ դեպքեր կամ պատահարներ չեն գրանցվել: Միեւնույն ժամանակ արձանագրվել են երեխաների եւ ծնողների ժամանակավորապես միմյանցից առանձնացման մի քանի տասնյակ դեպքեր:

Ոստիկանության արագ եւ համակարգված գործողությունների շնորհիվ բոլոր նման դեպքերում երեխաները հայտնաբերվել եւ վերադարձվել են իրենց ծնողներին:

Բացի դրանից, միջոցառման ընթացքում հայտնաբերվել են պայուսակներ եւ այլ անձնական իրեր, որոնք ներկայումս գտնվում են Համայնքային ոստիկանության կենտրոնական բաժնում:

Թվում է՝ ամեն բան այնպես է, ինչպես պիտի լիներ, բայց հասկանանք՝ինչի համար կարող էր ծախսվել այս գումարը:

Կառավարությունն ապրիլից կրճատել է տեղահանված արցախցիներին տրվող 50 հազարական դրամի աջակցության ծրագիրը:

«Դրա փոխարեն ընտանիքի ամեն մի անձին 50 հազար դրամի չափով աջակցության ծրագիր ենք գործարկել, որը բոլորի համար չէ ու առաջիկա ամիսներին գնալով նվազելու է: Այս պահին ոչ միայն խոցելի խմբերը, այլ բոլորը, հունվարից մինչեւ մարտ ամսվա վերջ ստանալու են անձը 50 հազար դրամ, իսկ արդեն ապրիլից ստանալու են թիրախային խմբերը՝ որոնք են՝ 1-ին եւ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք, կերակրողին կորցրած անձինք, մինչեւ 18 տարեկանները եւ կենսաթոշակառուները: Այս անձինք ապրիլ, մայիս եւ հունիս ամիսներին ստանալու են անձը 40 հազար դրամ աջակցություն, իսկ արդեն հուլիսից այդ 40 հազարը կդառնա 30 հազար դրամ»,- այս մասին դեռ այն ժամանակ հայտնել էին աշխատանիք եւ սոցիալական հարցերի նախարարությունից:

Այս գումարով գրեթե 12 հազար 152 անձի կարող էր տրվել հավելյալ աջակցություն եւս 1 ամիս:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ՇՈՒՐՋ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

UFC-ի թեթեւ քաշային կարգի գործող չեմպիոն Իսլամ Մախաչեւը մեկնաբանել է թեթեւ քաշային կարգում ստեղծված իրավիճակը, որտեղ ժամանակավոր տիտղոսի համար կմենամարտեն Փեդի Փիմբլեթը եւ Ջասթին Գեյջին:

«Թող կազմակերպությունը չնեղանա, բայց հիմա ինձ համար ավելի ու ավելի անհասկանալի մենամարտեր են տեղի ունենում: Կարծում եմ՝ Արմանը պետք է մենամարտեր տիտղոսի համար: Բայց Արմանը հիմա չի մենամարտի, կմենամարտեն Փիմբլեթն ու Գեյջին: Ով էլ հաղթի նրանցից, կմենամարտի Իլյա Թոփուրիայի հետ: Սա նշանակում է, որ Արմանը պետք է եւս մեկ տարի սպասի:

Իմ կարիերայում էլ էր այդպես: Ես 10 մենամարտ անցկացրի, որպեսզի հասնեմ տիտղոսին՝ 10 հաղթական մենամարտ: Արմանը, հավանաբար, պետք է մի փոքր սպասի, համբերի», - ասել է Մախաչեւը Red Corner MMA YouTube ալիքին տված հարցազրույցում:

Հիշեցնենք, որ Փեդի Փիմբլեթը եւ Ջասթին Գեյջին կմենամարտեն UFC-ի թեթեւ քաշային կարգի ժամանակավոր գոտու համար UFC 324-ում, որը կկայանա ԱՄՆ-ի Լաս Վեգաս քաղաքում՝ 2026 թվականի հունվարի 25-ին: Այնուհետեւ, ըստ UFC-ի նախագահ Դանա Ուայթի, մենամարտի հաղթողը կհանդիպի նույն քաշային կարգի գործող չեմպիոն Իլյա Թոփուրիայի հետ, որը անձնական խնդիրների պատճառով կարճատեւ դադար է վերցրել:

ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Գերմանացի դարպասապահ Մարկ-Անդրե տեր Շտեգենը կարող է լքել «Բարսելոնան» ձմեռային տրանսֆերային պատուհանի ընթացքում, հայտնում է լրագրող Էկրեմ Քոնուրը:

Աղբյուրի համաձայն՝ Ստամբուլի «Բեշիկթաշը» հետաքրքրված է դարպասապահի ծառայություններով: Թուրքական ակումբը 33-ամյա ֆուտբոլիստի համար վարձակալության առաջարկ է արել «Բլաուգրանային»: Տեր Շտեգենը, իր հերթին, չի ցանկանում լքել Իսպանիայի առաջնությունը՝ ավելի ցածր մակարդակի առաջնություն տեղափոխվելու համար:

ԽՆԴԻՐՆԵՐ

«Լիվերպուլի» ուելսցի լեգենդար հարձակվող Յան Ռաշը տեղափոխվել է վերակենդանացման բաժանմունք՝ առողջական վիճակի կտրուկ վատթարացման պատճառով:

Նա մոտ 48 ժամ գտնվել է ծանր վիճակում եւ միացված է եղել արհեստական շնչառության սարքին: The Guardian-ը հաղորդում է, որ նախկին ֆուտբոլիստն այժմ գտնվում է վերականգնման փուլում:

«Լիվերպուլը» արձագանքել է նախկին խաղացողի առողջական խնդիրներին՝ մամուլի հաղորդագրությամբ շնորհակալություն հայտնելով կլինիկայի անձնակազմին, որոնց հաջողվել է փրկել Ռաշին:

● *Դեկտեմբերի 17-ին՝19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Երեք ընկեր» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-6ս.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ 1-ին անգամ հիփոթեքային վարկի տոկոսների չափով եկամտահարկի գումարների վերադարձման համար:
Սերգեյ Խլղաթյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հիփոթեքային վարկի վճարված տոկոսների չափով եկամտային հարկի գումարի վերադարձման ծրագրից առաջին անգամ օգտվողներն անհրաժեշտ փաստաթղթերը հարկային մարմին պետք է ներկայացնեն առձեռն կամ փոստով, հայտնում են ՊԵԿ-ից:

Անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված՝ եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքի հաստատման հայտ: Հայտին կից վարկառուի կողմից հարկային մարմին են ներկայացվում հետեւյալ փաստաթղթերը եւ դրանց լուսապատճենները՝

1.վարկառուի անձը հաստատող փաստաթուղթ,

2.վարկառուի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, ՀՎՀՀ-ն (առկայության դեպքում),

3.հիփոթեքային վարկի տրամադրման պայմանագրի բնօրինակ կամ այդ պայմանագրի՝ նոտարական կարգով վավերացված պատճենը, հիփոթեքային վարկի պայմանագրի մարման ժամանակացույցը եւ հիփոթեքային պայմանագրի շրջանակներում ձեռք բերվող՝ գրավադրված գույքի սեփականության (կամ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի կամ գույքի կառուցապատման իրավունքի) պետական գրանցման վկայականը:

4.Կառուցապատողի կողմից տրված տեղեկանք՝ բնակարանը կամ անհատական բնակելի տունն անմիջապես կառուցապատողից ձեռք բերված (բերվող) լինելու մասին, կամ անհատական բնակելի տան շինարարության թույլտվություն:

5.Բնակարանի կամ անհատական բնակելի տան առուվաճառքի պայմանագիր կամ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի մասին կամ բնակարանի կառուցապատման իրավունքի ձեռքբերման պայմանագրի բնօրինակ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հիշեցնում՝ պետական եկամուտների կոմիտեի կողմից եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքի հայտի հաստատումից հետո, անհրաժեշտ է գրանցվել «Անհատական հաշիվների տեղեկատվական պորտալում» եւ ուղարկել էլեկտրոնային դիմումն ընդհանուր սահմանված կարգով: Էլեկտրոնային հարթակից օգտվելու քայլերի հաջորդականությունը ներկայացված է տեսաուղեցույցում: Վարկառուն բացի էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումից՝ հարկային մարմին այլ փաստաթղթեր չի ներկայացնի:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:
Սյուզաննա Մարգարյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում: Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին:

Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Երեխային փաստացի խնամող ընտանիքի մոր (խորթ մոր), հոր (խորթ հոր) կամ խնամակալի ցանկությամբ տրամադրվում է երեխայի խնամքի արձակուրդ մինչեւ երեխայի երեք տարեկան դառնալը: Արձակուրդը վերցվում է ամբողջությամբ կամ մաս առ մաս: Նման իրավունք ունեցող աշխատողն այն կարող է ստանալ հերթականությամբ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Լիբանանահայ երաժիշտ Արա Մալիկյանը Ranker պորտալի հարցումների համաձայն աշխարհի լավագույն ջութակահարներից է:

Մալիկյանի Intruso World Tour-ի շրջանակում կազմակերպված է երեւանյան համերգը, որը տեղի կունենա փետրվարի 15-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Դասական եւ ժամանակակից երաժշտության երկրպագուները կառնչվեն գեղեցիկին, անսպասելիին, զարմանալիին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 8 - 13 - 2 + 1
Կոտայքի լեռներ	- 7 - 12 - 1 + 1
Կոտայքի նախալեռներ	- 2 - 4 + 3 + 5
Գեղարքունիք	- 7 - 12 - 2 + 1
Լոռի	- 5 - 9 + 1 + 4
Տավուշ	- 3 + 1 + 2 + 5
Արագածոտնի լեռներ	- 8 - 13 - 3 + 1
Արագածոտնի նախալեռներ	- 2 - 5 + 5 + 8

Արարատ	- 1 - 4 + 5 + 8
Արմավիր	- 2 - 6 + 5 + 8
Վայոց ձորի լեռներ	- 8 - 12 - 3 + 1
Վայոց ձորի նախալեռներ	- 2 - 5 + 5 + 8
Սյունիքի նախալեռներ	- 5 - 10 - 1 - 4
Սյունիքի հովիտներ	- 3 + 1 + 2 + 5
ԼՂՀ	- 3 + 1 + 1 + 4
Երեւան	0 + 1 + 3 + 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.12.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*